ԲՅՈՒԼԵՏԵՆ

ՕԳՈՍՏՈՍ *2024*թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Օգոստոսին գումարվել է Պալատի խորհրդի 1 նիստ՝ 05.08.2024թ.ին:

05.08.2024թ.նիստի օրակարգում ընդգրկված էր **7** հարց: Քննարկման արդյունքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած 3 ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի ֆիզիկական անձ անդամի՝ դիմումի համաձայն անդամակցության դադարեցնելու, 9 անձանց Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի անդամներ «Էն-Աուդիտ» ՍՊԸ-ի և «Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ-ի անդամակցություն դադարեցնելու վերաբերյալ որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 27.08.2024թ., որում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին աուդիտորի և/կամ փորձագետ հաշվապահի որակավորում շնորհել ընդհանուր թվով 9 անձանց և հավանություն է տվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

15.08.2024թ.-ին տեղի է ունեցել **«Աշխատանքային օրենսգրքի ամենակիրառելի կարգավորումները. հարց և պատասխան»** թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ժորա Սարգսյանը:**

23.08.2024թ.-ին տեղի է ունեցել **«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջները հաշվապահների համար»** թեմայով դասընթացը: Այն վարում էր **Տաթևիկ Կարապետյանը:**





28.08.2024թ.-ին տեղի է ունեցել **«Ավելացված արժեքի հարկ. հարց և պատասխան»** թեմայով դասընթացը: Այն վարում էր **Լեռնիկ Հարությունյանը:**

Փոխըմբռնման հուշագիր Պալատի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը և ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը օգոստոսի 23-ին ստորագրել են «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի միջև գործարար միջավայրի բարելավմանն ուղղված համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր: